ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ԵԼԻՇԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Փետրվարյան հեղափոխությանն անմիջապես հաջորդած հասարակական-քաղաքական մթնոլորտում հեղափոխական պայքարի մեջ ներքաշվեց նաև սովորող երիտասարդությունը, որը պայքար էր ծավալում հանուն դպրոցական այն հին կարգերի փոփոխման, որոնք իրենց մեջ միջնադարյան շատ բան էին պարունակում, և դպրոցը ծառայեցնում տիրապետող դասակարգի շահերին։ Այդ ռեժիմը սպանում էր մատաղ սերնդի մեջ ամեն մի կենդանի միտք, ձգտում էր նրանից պատրաստել բուրժուազիային, հոգևորականությանը հլու-հնազանդ սպասավորներ։

Ժամանակավոր կառավարությունը տառացիորեն որդեգրել էր ցարական կրթական սիստեմը։ Հեղափոխության հաղթանակից հետո քաղաքացիները կրթության բնագավառում փաստորեն չստացան իրավահավասարություն, չստեղծվեց դպրոցական միասնական սիստեմ, չընդարձակվեց դպրոցական ցանցը, մայրենի լեզվով դասավանդումը նորից մնաց հետին պլան մղված։ Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը չփոխվեց աշխատավորության շահերին համապատասխան և այլն։ Ուսի հեղափոխական եռուզեռի, հասարակական-քաղաքական ցնցումների մթնոլորտում սովորող երիտասարդությունը ներգրավվեց քաղաքական ակտիվ պայքարի մեջ։ Ստեղծվում են աշակերտական կազմակերպություններ ու միություններ, որոնք ուսումնասիրում էին մարքսիստական գրականությունը և ձգտում հեղափոխական պայքարի միջոցով բարեփոխել կրթական սիստեմը։ Դրան հասնելու միջոցը համընդհանուր դասադուլային շարժումն էր։

1917թ. մարտին դասադուլների սկիզբը դրեցին արական գիմնազիայի, իսկ ապրիլին՝ Երևանի թեմական դպրոցի աշակերտները[1]։ *Նրանք իրենց դպրոցների վարչություններից պահանջում էին հրաժարվել դասավանդման հետադիմական-կղերական մեթոդներից և ուսուցման մեջ առաջնորդվել կյանքի առաջադրած խնդիրներով։*

Այդ շրջանում հայ ուսուցչությունը, օգտվելով հեղափոխության ընձեռած հնարավորությունից, փորձեց տասնամյակներով կուտակված անլուծելի հարցերը լուծել մի հարվածով։ Նախապատրաստվեց հրավիրել ուսուցչական համագումար։ Սակայն այն իր երկչոտությամբ ու լիբերալիզմով չկարողացավ այնպիսի հարցեր դնել, որոնք արմատական վերակառուցման ենթարկեին դպրոցը։ Միաժամանակ, գտնվելով ժամանակավոր կառավարության վերահսկողության տակ՝ այն չկարողացավ իրագործել նաև իր իսկ արծարծած հարցերը (միասնական դպրոցական սիստեմ ստեղծել, դպրոցն անջատել եկեղեցուց, խրախուսել աշակերտական կազմակերպությունները, ապահովել աշակերտության ներկայացուցչությունը մանկավարժական ժողովում վճռական ձայնի իրավունքով և այլն)[2]։

1917—1918 ուսումնական տարին սկսվելուց անմիջապես հետո Անդրը-

---

* *Հոդվածում քննվում են Երևանի թեմական, արական, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտական շարժումները 1917 թ.։*

1 *«Նոր սերունդ», 1917, № 4։*

2 *ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 1, ց. 1, դ. 96, թ. 275—281, «Նոր սերունդ», 1917, № 5, 7։*

կովկասի խոշոր քաղաքների՝ Թիֆլիսի, Բաքվի, Քութաիսի և այլ վայրերի աշակերտները հանդես են գալիս մի շարք պահանջներով։ Նրանցից հետ չեն մնում նաև Երևանի պետական ու ազգային դպրոցների աշակերտները։ Աշակերտները պահանջում էին վերջին երեք դասարանների ներկայացուցիչներին թույլատրել վճռական ձայնի իրավունքով մասնակցելու մանկավարժական խորհրդին, անհապաղ բացել ազգային նախապատրաստական դասարաններ, ուժեղացնել հայագիտական առարկաների դասավանդումը, ավելացնել դրանց ժամերը, վերջապես ճանաչել աշակերտական կազմակերպությունները, դրանք համարել օրինական և այլն[3]։

Աշակերտական դասադուլների ճնշման տակ կովկասյան ուսուցչական համագումարը ևս հավանություն է տալիս այդ պահանջներին և իր որոշումը ներկայացնում Անդրկովկասի հատուկ կոմիտեի հաստատմանը։ Վերջինս մերժում է այդ որոշումը։ Դա վրդովեցնում է աշակերտներին և ընդհանուր դասադուլի նոր ալիք է բարձրացնում, որը լայն արձագանք է գտնում նաև Երևանի պետական ու ազգային դպրոցներում։ Առավելապես ուշագրավ է Երևանի արական գիմնազիայի՝ 1917 թ. հոկտեմբերի 17-ին սկսած դասադուլը, որը տևեց 10 օր և վերջացավ հոկտեմբերի 27-ին՝ աշակերտների լիակատար հաղթանակով[4]։

Գիմնազիայի դասադուլին հաջորդեց Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասադուլը։ Ճեմարանում հեղափոխական ժամանակաշրջանի հետ կապված ուսանողների և աշակերտների տրամադրության մեջ նույնպես տիրող է դառնում դպրոցական հին սիստեմի արմատական վերափոխման հարցը, և նրանք վերջնագրի ձևով ղեկավարությունից պահանջում են՝ 1) ազատ համարել երթևեկությունը։ Վերջին և նախավերջին դասարանների աշակերտներին իրավունք տալ առանց վերակացուի գիտության, իսկ ցածր դասարաններում աշակերտական մարմնի թույլտվությամբ դուրս գալ ճեմարանից, 2) աշակերտներին թույլատրել ներկայացուցիչ ունենալու մանկավարժական խորհրդում, որից 3-ը վերջին երկու դասարաններից՝ վճռական, իսկ 3-ը ցածր դասարաններից՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, 3) տնտեսական խորհրդի մեջ մտցնել 2 աշակերտ՝ վճռական ձայնի իրավունքով, 4) մատենադարանում ունենալ մեկ ներկայացուցիչ, 5) աշակերտական կազմակերպությունը ճանաչել օրինական, 6) ունենալ դպրոցական և դասարանական մարմին։ Ինքնավարություն տալ աշակերտներին, որի նպատակը պիտի լինի աշակերտների ներքին գործերի վարելը դասարաններում և դպրոցական գործերում, 7) վերացնել հունարենի և լատիներենի դասերը, 8) վերացնել պաշտոնական աղոթքը, եկեղեցի հաճախելը և եկեղեցում սպասավորելը պարտադիր չհամարել աշակերտների համար և այլն։ Իսկ վերջում նրանք ուղղակի շեշտադրում են. «Այսու պարտք ենք համարում հայտնել, որ վերոհիշյալ պահանջներից երկուսը գործադրության մեջ են մտցվում [վերջնագրի] հանձնման օրից»[5]։

Մանկավարժական խորհուրդը, իր 1917 թ. հոկտեմբերի 16-ի նիստում, հաշվի առնելով հեղափոխական ժամանակաշրջանի մթնոլորտը և ուսանողների ու աշակերտների կողմից անընդհատ բարձրացվող բարեփոխությունների պահանջը, ցանկալի է համարում, որպես չարիքներից փոքրագույն, զբաղվել այդ հարցով, քան այն կկատարեն իրենք՝ ուսանողներն ու աշակերտները։ Ուստի և ընտրվում է հանձնաժողով՝ անհրաժեշտ բարեփոխումների նախագիծ պատրաստելու համար։ Հանձնաժողովի անդամներ են ընտրվում բոլշևիկներ Աշ. Հովհաննիսյանը, Ա. Շավարշյանը և այլն[6]։ Ունենալով գաղափարական ու տակտիկական ճիշտ կողմնորոշում, հանձնաժողովի անդամները հսկայական աշխատանք են կատարում։ Նրանք, հաշվի առնելով երկրում ստեղծված հեղափոխական իրադրությունը և ճեմարանական կարգերի ճգնա-

---

3 Նույն տեղում, գ. 26, թ. 100, 126։

4 Նույն տեղում, թ. 400, 430։

5 Նույն տեղում, ֆ. 312, թ. 28, վ. 432։

6 Նույն տեղում, վ. 424։

ժամային վիճակը, մանկամարժական խորհրդին են ներկայացնում այնպիսի ծրագիր, որն ընդհանուր առմամբ ուղղված էր ճեմարանի ուսումնադաստիարակչական աշխատանքի ռեակցիոն համակարգի դեմ։ Նկատի ունենալով բացառապես ճեմարանի դասարանական բաժնի կարիքները, որոշ ժամանակ անց հանձնաժողովը մանկավարժական խորհրդին է ներկայացնում բարեփոխությունների հետևյալ կետերը. 1) կրոնի և ուսման սուրբ գրոցի դասավանդությունը դարձնել կամավոր, վերացնել եկեղեցական պատմության դասընթացը, դրա փոխարեն ավելացնել հայոց պատմության դասերի թիվը, որին զուգընթաց ցանկալի համարել աշակերտներին հայոց եկեղեցու պատմության մասին ծանոթություն տալը, 2) վերացնել հունարեն լեզվի դասերը, իսկ լատիներեն ցանկալի համարել բացառապես դասարանական բաժնում, 3) մտցնել աշակերտական ինքնավարություն, որի նպատակը պետք է լինի՝ ա) վարել աշակերտական ներքին կյանքին վերաբերվող գործերը՝ դասարաններում և ամբողջ դասարանական բաժնում, բ) օժանդակել դպրոցի տնտեսական, ուսումնական և վարչական մարմինների գործունեությունը, 4) վերացնել աղոթքը, եկեղեցի հաճախելը, եկեղեցում սպասավորելը պարտադիր չհամարել աշակերտների համար, 5) աղատ համարել երթևեկությունը և այլն[7]։

Բարեփոխության հիմքում դրված այս հարցերը դառնում են մանկավարժական խորհրդի բազմաթիվ նիստերի քննության առարկան։ Խորհրդի կղերապահպանողական ուղղությանը պատկանող անդամները համառ դիմադրություն են ցույց տալիս յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ։ Դիմադրությունն առավելապես մեծանում է, երբ քննարկում են կրոնին վերաբերող հարցերը։ Աշ. Հովհաննիսյանը հանձնաժողովի անունից հայտարարում է, որ ճեմարանում ծագած աշակերտական հուզումների մեծ մասը կապված է կրոնի դասավանդման հետ, ուստի և այդ հարցերը պետք է դրականապես լուծվեն։ Խորապես վերլուծելով ճեմարանում և Հայաստանի մյուս դպրոցներում իրադարձությունների ընթացքը, նա հանգում է այն եզրակացության, որ կրոնի հարցի լուծումը արմատապես կապված է ճեմարանի անդորրության պահպանման հետ։ Նա հայտարարում է, որ ճեմարանում ընդվզումների հիմնական պատճառը լայն հասարակության առաջադիմական պահանջների և դպրոցի կրոնական ուղղության պահպանողականության մեջ է։ Աշ. Հովհաննիսյանը, մի պատմական ակնարկ ձգելով ճեմարանի անցած ուղու վրա, նկատում է, որ այդ հաստատությունը սկզբնապես հանդես է եկել իբրև զուտ հոգևոր դպրոց, բայց իր զարգացման ընթացքում, հետզհետե աշխարհականանալով, ունեցել է իր և մյուս հոգևոր դպրոցներին վիճակված ուղին։ Տիրող քաղաքական պայմանների թելադրանքով դպրոց բանալը եղել է հոգևոր դասի մենաշնորհը, սակայն տնտեսական ու հասարակական կյանքի զարգացման հետ մեծանում է նաև աշխարհիկ ուղղություն մտցնելու հարցը։ Նա, խարազանելով ռեակցիոն հոգևորականությանը և մերկացնելով մանկավարժական խորհրդի պահպանողական անդամներին, վերլուծում է հայկական հոգևոր դպրոցի նախընթաց պատմությունը և ցույց տալիս, որ անցյալ դարի 50—60-ական թվականներից սկսած կրթական գործի ասպարեզում հոգևորականության դեմ մղվող պայքարը հանգում է եկեղեցական հոգևոր դպրոցների աստիճանաբար աշխարհականացմանը։ «Ներկա պահանջներին դպրոցը չի համապատասխանում,— ասում է Աշ. Հովհաննիսյանը,— որովհետև կատարելապես աշխարհիկ չի դարձել։ Եթե ռեֆորմների խնդիր է եղել, իբրև հիմնական խնդիր չի կարող շրջվել կրոնի խնդիրը։ Պետք է ճեմարանում ձևի և բովանդակության մեջ եղած հակասությունը վերանա՝ կամ աշխարհիկ լինի, կամ հոգևոր»։ Խոսելով ճեմարանի հետագա ընթացքի մասին, նա հաստատուն կերպով կանգնում է դպրոցի աշխարհականացման ուղղության վրա։ «Ձևական հողի վրա կանգնելով՝ մենք չենք կարող ասել, թե ճեմարանը հոգևոր է եղել, հոգևոր էլ պիտի մնա, կարելի է ուրիշ աշխարհիկ դպրոց բանալ, այսպիսով ճեմարանը կպահպանի հին ձևը և կունենա խտացված բովանդակություն՝ այդ ձևին հա-

[7] Նույն տեղում, վ. 422։

մապատասխան։ Բայց կա մի ուրիշ ճանապարհ. ստեղծել նոր բովանդակությանը համապատասխան ձև, որը համապատասխանի դպրոցի նոր բովանդակությանը, այդ քայլն էլ կլինի ճիշտը, որովհետև դա բացարձակ մեծամասնության ցանկությունը կլինի, ուրեմն մենք կամ ետ պիտի գնանք հին ձևին, կամ առաջ գնանք։ Հանձնաժողովի կարծիքով, վերջին ուղին պետք է բռնել և դա հեղափոխական ճանապարհն է ճեմարանին նոր ձև տալու համար»[8]։

Քվեարկության դնելով այդ հարցերը, մանկավարժական խորհրդի պահպանողական անդամները ձայների համապատասխան քանակություն չեն կարողանում հավաքել։ Այնուհետև կազմվում են խառը հանձնաժողովներ և մանկավարժական խորհրդի բազմաթիվ նիստերի քննության նյութ են դառնում աշակերտների մյուս պահանջները։ Սովորող երիտասարդները կրկին անգամ խնդիր էին ներկայացրել և պահանջել, որ իրենց ներկայացուցիչը մանկավարժական ժողովի հետ լինի օրենսդիր մարմին՝ վճռական ձայնի իրավունքով, քանի որ այլ կերպ աշակերտների շահը պաշտպանել հնարավոր չի լինի։

Պահանջների ողջ կարելի է եզրակացնել, որ սովորող երիտասարդությունը մանկավարժական խորհրդի պահպանողական անդամներին և իրեն համարում է իրար դեմ առ դեմ կանգնած տարբեր և հակադիր դասեր։

Ճեմարանի ղեկավարությունը փորձում է համոզել աշակերտներին և ցույց տալ նրանց պահանջների կատարման դժվարությունն ու անհնարինությունը։ Այն ապացույցներ է բերում որոշ դպրոցների աշակերտական ներկայացուցիչների խորհրդակցական ձայնի իրավունքի մասին, մատնանշելով, որ եթե ներկայացուցիչների՝ մանկխորհրդի նիստերի մասնակցության նպատակը «աշակերտական ցավերի թարգման լինելն է», ապա խորհրդակցական ձայնով էլ այդ կարելի է կատարել և այլն։ Սակայն աշակերտները անդրդվելի են մնում և պահանջում են անպայման վճռական ձայնի իրավունք ունենալ, իսկ հակառակ դեպքում, ինչպես հայտնել էին նրանք պահանջագրում, չեն ենթարկվի մանկխորհրդի որոշումներին։ Զարգացող իրադարձություններին համապատասխան Աշ. Հովհաննիսյանն ուղղակի առաջարկում է ռեֆորմի վավերացված նախագիծը ներկայացնել աշակերտներին և դրանով լուծել գործյան հանգույցը։ Միաժամանակ նա այն կարծիքն է հայտնում, որ «եթե բարենորոգումների ծրագիրը շուտով չվավերացվի, դրությունը հետզհետե կլրջանա և կգա ժամանակ, որ օրավուր, ժամ առ ժամ զգալի կլինեն հետևանքները։ Այդ դրությունից դուրս գալու միակ ելքը ռեֆորմների անհապաղ վավերացման ճանապարհն է»[9]։

Մանկխորհուրդը, իր իրավասությունից վեր համարելով նման մեծ բարեփոխումների կատարումը, այն ներկայացնում է կաթողիկոսի դատին։ Վերջինս հարուցած հարցերի մի մասը անպատասխան է թողնում, իսկ մի մասին տալիս է կիսատ-պռատ լուծում՝ հետևյալ տեսքով. Ա) քանի որ հանրային աղոթքի ժամանակ կատարվում են ոչ պատշաճ երևույթներ, վերացնել այդ ձևի աղոթքը և դրա փոխարեն հաստատել դասարանական աղոթք՝ ուսուցիչների ներկայությամբ, Բ) եկեղեցի հաճախել միայն կիրակի օրը, պատարագին, որի ժամանակ երգեցիկ խումբը մասնակից լինի ժամասացությանը, Գ) տընտեսականի նկատմամբ վեճը հնարավոր է համարում, իբրև փորձ այս տարվա համար թույլ տալու մանկխորհրդի կողմից առաջարկված ձևը, այն է՝ ընտրել խորհուրդ, որը կկազմի ճեմարանի վանքի կողմից տրամադրվելիք գումարների նախահաշիվ[10]։

Ճեմարանի բարեփոխությունը մշակող հանձնաժողովը, դժգոհ մնալով ռեֆորմի նկատմամբ կաթողիկոսի ոչ լուրջ վերաբերմունքից, հարցապնդում է կատարում մանկխորհրդում, մի անգամ ևս հիշեցնելով նման հարցերը հեղափոխության ժամանակի ոգով լուծելու պահանջը։ Հանձնաժողովի սմենից Աշ. Հովհաննիսյանը հայտնում է, թե «Վեհափառին բացատրված է եղել, թե

8 Նույն տեղում,

9 Նույն տեղում, վ. 436։

10 Նույն տեղում, վ. 437։

ինչ տեսակ մթնոլորտ է ստեղծված ճեմարանում. թե Վեհափառը ընդունել է այդ հարցերը լոկ իբրև սկզբունքային ակադեմիական հարցեր և ըստ այդմ էլ արել է իր որոշումը»[11]։

Մանկխորհուրդը երկար վիճաբանությունից հետո որոշում է աշակերտներից և ուսանողներից 2-ական ներկայացուցիչ ընդգրկել տնտեսական խորհրդում վճռական ձայնի իրավունքով, իսկ մանկխորհրդում՝ 2—4 ներկայացուցիչ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։ Մանկխորհրդի որոշումը չի գոհացնում աշակերտներին։ Աշակերտության ժողովում քննության են առնվում մանկխորհրդի առաջարկությունները և դալիս են այն եզրակացության, որ ճեմարանը կարիք ունի արմատական վերափոխության, որ այն պիտի անջատվի եկեղեցուց, դառնա ազգային բարձրագույն դպրոց և որ այդ հեղաշրջման մեջ գործուն մասնակցություն պետք է ունենա ուսանողությունը։ Սակայն միաժամանակ նշվում է. քանի որ այդ արմատական փոփոխությունները հնարավոր չեն արդի անմխիթար կացության պատճառով, ուստի պետք է մի շարք բարեփոխություններ կատարել, որոնք հնարավորություն կտան ճեմարանի ներքին կյանքը շատ թե քիչ բարելավելու։

Ճեմարանի բարեփոխությունների ծրագրի քննարկման օրերին մեկը մյուսին էին հաջորդում աշակերտական ժողովները, որտեղ քննարկվում էին ներքին կյանքի հետ կապված և աշակերտներին հուզող բազմաթիվ հարցեր։ Ժողովների համապատասխան որոշումները վերջնագրի ձևով ներկայացվում են մանկավարժական խորհրդին։ Այսպես, 1917 թ. հոկտեմբերի 22-ին և 23-ին ճեմարանի ընդհանուր աշակերտական ժողովում որոշվում է, որ յուրաքանչյուր դասարան իր ներքին գործերը վարելու համար ունենա ինքնավար մարմին, իսկ ճեմարանի ընդհանուր գործերը վարելու համար լինի «ներկայացուցչական մարմին», որը պետք է ունենա օրենսդիր և գործադիր ֆունկցիաներ։ Այս որոշման հիմքն վրա «ներկայացուցչական մարմինը» դիմում է ճեմարանի տեսչին. ըստ դիմումի «այսուհետև աշակերտության կյանքին վերաբերվող բոլոր հարցերում ճեմարանի վարչությունն ու մանկխորհուրդը հարաբերություններ պետք է ունենան «ներկայացուցչական մարմնի» հետ» և պահանջում է մեկ առանձնասենյակ՝ գործերը վարելու համար[12]։

Հոկտեմբերի 26-ի մի այլ պահանջագրով աշակերտները պահանջում են վերանայել պաշտոնական աղոթքն ու եկեղեցի գնալը, «թույլատրել մանկխորհրդում ունենալու 6 ներկայացուցիչ՝ 3-ը վճռական, 3-ը խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ տնտեսական հանձնաժողովում՝ 2 ներկայացուցիչ, վճռական ձայնի իրավունքով, մատենադարանում ունենալ 1 ներկայացուցիչ, աշակերտական կազմակերպությունը ճանաչել օրինական» և այլն[13]։ Քանի որ մանկխորհուրդը ձգձգում է պատասխանը, աշակերտները հոկտեմբերի 30-ին վերջնագիր են ներկայացնում, որտեղ հայտարարում են, որ իրենք չեն ենթարկվում «մանկխորհրդի որոշմանը»[14]։ Նույն ժամանակաշրջանում մանկխորհուրդը համանման մի պահանջագիր է ստանում ուսանողների կողմից։

Հաշվի առնելով այս ամենը և նկատի ունենալով Երևանի արական գիմնազիայի փորձը (որը, ինչպես նշվեց, ավարտվեց աշակերտների լիակատար հաղթանակով), խորհուրդը հարկադրված ընդունում է աշակերտների պահանջները։

1917 թ. քաղաքական շիկացած մթնոլորտը հրամայաբար աշակերտությանը ներքաշում է իր հորձանուտի մեջ։ Նա սկսում է ակտիվորեն հետաքրքրվել քաղաքական կյանքով։ Բացի դասադուլներից ու մասսայական ցույցերից, աշակերտները հանդես էին դալիս նաև մամուլի էջերում։ Այսպես, Ներսիսյան դպրոցի աշակերտները, հանդես գալով «Նոր սերունդ» թերթում, անհամատեղելի են համարում կրոնը և լուսավորության գործը, եկեղեցին համարում

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, թ. 37, վ. 316։

13 Նույն տեղում, թ. 28, վ. 434։

14 «Նոր սերունդ», 1917, № 7։

են որպես ոչ առաջադիմական կազմակերպություն, դանում որ այն «չի կարող ջատագով լինել կրթությանը, ընդհակառակը, նրա շահերը պահանջում են, որ որքան կարելի է մարդիկ քիչ զարգանան, որովհետև այլ կերպ նրա հիմքերը կխորտակվեն»[15]։ Եկեղեցականներին մեղադրելով ժողովրդին խավարի մեջ պահելու և ուսումնական հաստատությունները տգետ քահանաներ ու թերուս վարժապետներ պատրաստող հիմնարկներ դարձնելու մեջ, աշակերտությանը կոչ է արվում ժողովրդական լայն զանգվածների հետ տապալել եկեղեցական իշխանությունը դպրոցում և այն հանձնել ժողովրդին։ Անդրադառնալով այդ հարցին, նրանք գրում են. «Դպրոցը պետք է լինի նրանը, ով նրան պահում է. դպրոցը պետք է լինի նրանը, ում նա հարկավոր է, դպրոցը պետք է լինի նրանը, ով նրան հասկանում է, պետք է դպրոցը խլել եկեղեցուց և տալ ժողովրդին, մանկավարժներին ու աշակերտներին»։ Նրանք կոչ են անում աշակերտությանը՝ դեն ձգել հոգևոր կոչումը և պայքարել «ազատ ժողովրդական ինքնավար դպրոցի համար»։

Բոլշևիկյան մամուլը լայնորեն արձագանքում էր աշակերտների ընդվզումներին ու ցանկություններին, նրանց դաստիարակում ինտերնացիոնալիզմի ոգով։ Բոլշևիկյան մամուլի միջոցով աշակերտները կարողանում են դրսևորել իրենց հայացքները տիրող դպրոցական կարգերի ու ազգայնական գաղափարների դեմ։ «Բանվորի կռիվ» թերթը, օրինակ, տպագրելով Ներսիսյան դպրոցի աշակերտ Խորխորունու «Պետք է փակել Ներսիսյան դպրոցը» հոդվածը, ողջունում է աշակերտներին՝ բոլշևիկներին ցույց տված նրանց ամենօրյա աջակցության համար և կոչ է անում պայքարել ճնշվող դասակարգերի ազատագրության գործի համար, մի գործ, որը մեծ զրկանքներ, քաջություն ու տոկունություն է պահանջում։ Իր հոդվածում Խորխորունին, մերկացնելով հայ ազգայնականների ազգայնամոլ գաղափարները, գրում է. «Ինտերնացիոնալի հաղթական ընթացքի համար այլևս անզոր են ազգային հրաշագործ թալիսմաններն ու արհեստական արգելքները։ Ազգային դպրոցի տված կրթությունն այլևս չի կարողանում պահպանել հայ պատանու միտքը նեղ կաղապարի մեջ։ Գիտակցելով իր սոցիալ-տնտեսական դրությունը, հայ ազգի՝ հաց ուտող աշակերտները ամենայն համարձակությամբ հրապարակ են նետվում՝ պայքարելու այդ ազգային իդիալների դեմ»[16]։ Նա անարգանքի սյունին է գամում միլիոնատեր մանթաշյաններին, որոնք կլանում են աշխատավոր ժողովրդի ֆիզիկական ու բարոյական աշխատանքի արդյունքները՝ մի քանի կոպեկ շպրտելով ազգային դպրոցներին, «գրպանային իդեալները» վերափոխում ազգային իդեալով։ Նա կշտամբում է ազգայնականներին, որոնք կուրացած հայ բուրժուազիայի հրամցրած փշրանքներով, աշակերտներից պահանջում են «սրբազան» պարտքը տալ իր դասակարգային թշնամուն։ Ուստի, նա աշակերտներին կոչ է անում համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո և պայքարել հանուն շահագործվող մասսաների ազատագրման։ «Մենք դասակարգի շահերի պաշտպանությանը նվիրվել ենք և գիտենք, որ մեր դասակարգի շահերը պաշտպանել կարող ենք բոլոր երկրների աշխատավոր դասակարգի հետ համերաշխ ու միացած գործելով։

Ուստի արհամարհելով բուրժուա-ազգայնական անզոր լուտանքները, մենք ոգևորված կոչում ենք.

«Կորչի աշխատավոր մասսաների շահագործմանը նպաստող ազգայնականությունը».

«Կեցցե Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը»[17]։

Այսպիսով, Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում հայկական մի շարք ուսումնական հաստատությունների բարձր դասարանների աշակերտները դեմոկրատական լայն զանգվածների հետ ակտիվո-

---

15 ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4012, ց. 1, թ. 2։

16 «Բանվորի կռիվ», 25. X. 1917։

17 Նույն տեղում։

բեն մասնակցել են բուրժուակալվածատիրական կարգերի արդյունք հանդիսացող դպրոցական բյուրոկրատական սիստեմի դեմ։

УЧЕНИЧЕСКИЕ ВЫСТУПЛЕНИЯ В АРМЯНСКИХ ШКОЛАХ

ЕГИШЕ СААКЯН

Резюме

После победы Февральской революции в новой общественно-политической атмосфере в революционную борьбу включилась и учащаяся молодежь Закавказья. Она боролась против существующих старых школьных порядков, в силу которых школа подчинялась интересам господствующего класса. В этот период учащиеся старших классов некоторых армянских учебных заведений принимали активное участие в борьбе со школьной бюрократической системой, являющейся следствием царившего буржуазно-помещичьего строя.